ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ տրված տեքստի բաց թողնված *ր* կամ *ռ* տառը:

Զերմուկի մասին շատ եմ լսել, բայց ուզում եմ իմ աչքերով տեսնել այդ գեղատեսիլ հրաշքը: Գործընկերներիս հետ մեկնեցի Զերմուկ՝ վայելելու այդ դրախտավայրը: Ոլորապտույտ կե_մաննե-րը հաղթահարելով՝ մենք հասանք մեր սիրած գողտրիկ անկյունը՝ աշխարհահա_չակ ա_ողջարանային քաղաքը:

Արդեն գարուն է, կենսաթ_թի_, վա_վ_ուն գարուն: Կարենը՝ ընկերս, ագահորեն շնչում է անապակ օդը: Նա երեխայի նման մանկացել էր:

– Տեսե՛ք, մ_ափած բնությունը զա_թնել է, զա_դարվել զա_վա_գույներով,– բերկրանքով ասաց նա:

Ակամա նայեցինք մեր շու_ջը. հայկական երփներանգ գորգերի նման ամեն ինչ գեղեցիկ էր:

(Կազմող՝ Թ. Թովմասյան)

2. Վերևում բերված պատմությունը շարունակի՛ր՝ գործածելով *ր–ռ* բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող բառեր:

3. Հետևյալ արմատներից յուրաքանչյուրով կազմի՛ր մեկ-երկու բառ, որտեղ *ռ*-ին հաջորդի *ն* բաղաձայնը՝

դուռ _____ խառը _____

ընթերց(ել)_____ կուռ_____

թոռ _____ բուռ_____

լեռ _____ ձեռ(ք)_____

Օրինակ՝ ծոռ–ծոռնուհի

4. Կազմի՛ր մեկական նախադասություն հետևյալ նմանահունչ բառերով՝ *հեռարձակ*, *հերարձակ*, *կարգ*, *կառք*, *բառ*, *բար* (զույգային աշխատանք):

5. Կարդա՛ Ե. Պետրոսյանի բանաստեղծության երկու քառատողը, դո՛ւրս գրիր *բ–ռ* բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող բառերը: Փորձի՛ր բանաստեղծությունը վերարտադրել նկարով:

ԿՌՈՒՆԿՆԵՐԻ ԵՐԱՄ

Կռունկների երամ՝ կապույտ երկնքի մեջ,
Ճախրող գեղեցկություն, թռչող գարուն...
Ուզում ես հա՛ նայել, նայել անվերջ,
Բայց անցնում է, հալվում կապույտներում:

Դար ու դարեր այդպես գնացել են, եկել,
Եվ միշտ իմացել են՝ ու՛ր և ինչու՛,
Հազար անգամ չարը ճանապարհն է փակել,
Երամն իր չի լքել ոչ մի թռչուն:

6. Բառակապակցություններում գործածի՛ր բնաձայնական բառեր:

Նմուշ՝ ագռավի կռկռոց:

7. *Գարնանամուտ*, *արնավառ*, *արնգահար*, *նարնջագույն* բառերով նախադասություններ կազմիր: